

սիրտերնիդ չէ, այլ ձեր ստամոքսն է որ կը ցաւի, որովհետեւ կը թթուի: Նոյնպէս ձեր ստամոքսի դժուարամարտութիւնն է որ բուն կը բերէ, սրտին վրայ ճնշելով բարբախտ կամ դժուարաշնչութիւն կը պատճառէ ճաշին վերջ եւայլն:

Պէտք է դանդաղ ուտէք եւ լաւ ծամէք. օմեկ (պայամ) հաց կերեք, որպէսզի քիչ ուտել եւ լաւ մտքել: Ձգուշացելք կտրազի կամ ձիմախդի մէջ տապկուած կերակուրներէ (մտեղէն թէ կանանչեղէն). նաեւ արեւելեան ամէն տեսակ ծանր, խլրոտ եւ համեմուած կերակուրներէ: Ճերմակ լուրիան եւ սիսեռն ալ չեն յարմարիք ձեր ստամոքսին, որովհետեւ ստատ կազ կը շինեն եւ կ'որնցնեն: Եթէ այս պատուիրներուն ուշադրութեամբ հետեւիք, հասնականարար դեղ առնելու պէտք չէք ունենար, անհետացնելու համար ճաշերէն վերջ ձեր զգացած անհանգստութիւնք:

ԻՆՁ ԿԸ ԳՐԵՆ «ԲՈՒԺԱՆՔ»Ի ՄԱՍԻՆ

«Բուժանք»ի մասին ներբողականներ կը ստանանք ամէն կողմէ, բացառաբար, այս անգամ մէջբերումներ կ'ընենք քանի մը նամակներէ: Շնորհակալութիւն յայտնելով մեր ընթերցողներուն իրենց համակրանքին եւ գնահատութեանց համար, կ'ուզենք յշտեղ պարագայ մը.—

«Բուժանք»ը առեւտրական ձեռնարկ մը չէ: Ընդհակառակը, անոր առաջադրած նպատակը բարոյական եւ նիւթական ծանր գոհողութիւններ կը պարտադրէ: Մենք ջանք չենք խնայեր գոհացում տալու համար մեր ընթերցողներու թելադրութիւններուն, որպէսզի «Բուժանք»ը ըլլայ աւելի ճոխ, աւելի գործնական եւ աւելի օգտակար: Եւ եթէ, հակառակ մեր եւ շատերու փափաքին, չկրցանք աւելցնել թերթին ծաւալը, բայց եւ այնպէս, շնորհիւ զայն տպագրողներու բարեացակամութեան, կը ջանանք 24 էջի մէջ սեղմեցնել 32 էջի բաւելիք նիւթ: Վերջապէս ամէն կարելի զոհողութիւն կ'ընենք եւ պիտի շարունակենք ընել:

Բայց մեր ձեռնարկին յաջողութեան համար, պէտք ունինք մեր ընթերցողներու ԳՈՐԾՆԱԿԱՆ համակրանքին ու աջակցութեան եւ կը սպասենք որ անոնք ալ վերցնեն զոհողութեան իրենց բաժինը:

Շատեր նորոգեցին իրենց բաժանորդագրութիւնը. այս լաւ: Կը յուսանք որ յետամնացներն ալ պիտի փութացնեն իրենց բաժնեգիրներ, որպէս զի չստիպուինք դադրեցնել թերթին առաքումը:

Իսկ քանի մը բաժանորդներ, իրենց բաժնեգնին եւ համակրանքին միացուցին մէկ կամ աւելի նոր բաժանորդներու բաժնեգիրը. այս աւելի լաւ:

Կը սպասենք որ իւրաքանչիւր ընթերցող հետեւի այս օրինակին եւ պարտք սեպէ ԳԼԹ ՄԷԿ ՆՈՒ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՏՆՆԷ՛ ԼԱՆԻՒՆ չենք պահանջեր «Բուժանքի» բարեկամներէն: ԽՄԲ.

Պ. Մ. Տ. Ս. — (Անվրս). — «Բուժանք»ը խիստ օգտակար հրատարակութիւն մըն է. զայն անհրաժեշտութիւն մը կը համարեմ ամէն հայ տուէի համար: ...Յօդուածները կը կարդանք մեր տան մէջ, մեծն մինչեւ պզտիկը, առողջ մնալու պայմանները իրացնելու համար եւ այդ տեսակտով օգուտած ենք «Բուժանք»ը: «Բուժանք»ը պէտք է տարածուի: Իւրաքանչիւր ընթերցող պէտք է խորհի թէ քանի որ ինք կ'օգտուի անկէ, պէտք է պատճառ ըլլա՞յ որ իր սպասակմանը, բարեկամը, ծանօթը եւս օգտուին եւ հետեւաբար թելադրէ որ անոնք ալ բաժանորդագրուին...:

Տիկ. Ն. Օ. (Թաւրիզ-Պարսկաստան).— «Մի տարի է որ ամենամեծ հանոյցը| ենք կարգում, ամուսինս եւ ես, ձեր «Բուժանքը»: Այնքան ենք սիրում այդ փոքրիկ պարբերականը որ ժամանակին անհամբեր ենք սպասում նրա համարելիքին...»:

Պ. Մ. Միջր. Ջարտարագէտ (Պրիստէլ).— «Այս առթիւ ուրախ եմ շնորհատրու-
Քիւններս յայտնելու Ձերձի խմբագրութեան որ կարողացաւ «Բուժանքը» ընծայել իրապէս շահեկան եւ օգտակար հայ հասարակութեան բոլոր խաւերուն եւ նոյնիսկ Քրտնագէտնե-
րուն համար:»

Պ. Յ. Յ. Ուսանող (Պէյրուի).— «...Ձեր Թագած ջանքերը շնորհատրելի են. ներ-
փակ կը ստանաք... Քրտնք, զոր խնայած եմ այս նպատակին համար ուսանողական հա-
մետ քսակէս...»

Պ. Ա. Փ. Ատամնարոյծ (Միտիլի).— «Պիտանի եւ օգտակար հրատարակութիւն
մըն է, որ հիւնալիք չունի — Անշուշտ կ'օգտուուիմ, քանի որ ակնկալածս կը գտնեմ ա-
նոր մէջ — Զեմ Թելազըբը ընդհանուր գիտական Ձերձի վերածնել... — Լրագիրներու մէջ
հրատարակուած բժշկական յօդուածները անշշմար կ'անցնին, որովհետեւ Ձերձը առօրեայ է.
Քարմութիւնը կորսնցնելուն պէս կը նետուի: մինչդեռ «Բուժանք» միշտ Թարմ կը մնայ, կը
պահուի եւ երբ որ ուզէ կը կարգացուի...»:

Պ. Մ. Ե. (Փարիզ).— «Մեր տունը շատ Ձերձեր կը ստանանք, քանի մը հատը
այլ է կ'անցնենք, իսկ «Բուժանքը» ձեռքէ ձեռք կը խլենք...»:

Պ. Գ. Պ. — (Փարիզ).— «Ներփակ հինգ բաժանորդի հասցէ կը դրկեմ. դեռ քանի
մը հատ ալ պիտի գտնեմ: Կրնայց հետեցնել Ձէ որքան կը գնահատեմ «Բուժանքը»:

Տիկ. Մ. Դ. (Լոնկ-Ալլանտ Սիթի-Ամերիկա).— «...Մտոյց է ապրի «Բուժանքը»,
մեծնայ, զարգանայ եւ ամէն հայ տունի մէջ իբ պատուական տեղը գրաւէ...»:

Պ. Ն. (Պերլին).— «...Մեծապէս կ'օգտուինք «Բուժանք»ի բժշկական առողջապահա-
կան յօդուածներէն, մեր բոլոր պահանջները կը գոհացնէ...»:

Պ. Գրիկ (Փարիզ).— «...«Բուժանք»ը իրաւամբ ամէն գովեստէ եւ արժանիքէ վեր
է... Սքօրի տեսական բաժին մը եւ առտնին բժշկութեանց փոքրիկ ցանկ մը խիստ նպա-
տակալամբ պիտի ըլլար... «Բուժանք»ը գրպանի օրացոյցի պէս ամէն հայու մօտիկը
լինելու է. մեր բարեգործական հաստատութեանց մեծ բաժին կ'ընայ քիչ մը իրենց ուղ-
ղութիւնը արդիացնելով ժողովուրդն ալ միասին դրական գործակցութեան վարժեցնելին,
փոխանակ հին ձեւ ողորմութիւններով բաւականանալու...»:

Պ. Ս. Ս. (Սարսէլ).— «Ձեր Ձերձը իբ պարզ հոգով եւ դիւրամտայելութեամբ կա-
րելորդ մը կատարէ... իբ ուղղութեամբ սիրելի դարձած է մեզի...»:

Օր. Բ. Ն. Զ. (Մոնրու).— «...Լոյս տեսած օրէն մինչեւ հիմա կատարեալ ուշա-
դրութեամբ հետեւած եմ բոլոր Քիւրտուն եւ էսպէս օգտուած անոնց պարունակութեանն...»:

Պ. Յ. Ա. — (Սէն-Միլիէն).— «...Ձեր Ձերձին պարունակութեան ըստ բաւականի
կ'օգտուիմ գործնական կեանքի մէջ... անհրաժեշտ կը գտնեմ անոր ծաւալը առեւտրի
կրկնապատկել...»:

Պ. Բ. Զ. — Ատամնարոյծ (Սարսէլ).— «...«Բուժանք»ի ուղղութիւնը յոյժ գնահա-
տելի է. լրագիրներու մէջ. հրատարակուած բժշկա-առողջապահական յօդուածները չեն
կրնար անոր դերը կատարել...»:

Պ. Ա. Մ. Թ. (Սարսէլ).— «Մեծապէս գոհ եմ ձեր Ձերձին պարունակութեան, ուղ-
ղութեան եւ գտած չեմք համակրանքին եւ ընդունելութեան համար...»:

Պ. Վ. Ղ. (Տիւրքի-Ամերիկա).— «Իմ նպատակն է միշտ բաժանորդագրուիլ ձեր
այս նուիրական Ձերձին որ պիտի ըլլայ հրատարակման առաջնորդ մը կեանքի մէջ...»: